«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման

դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

<u>Թեմա՝</u> Ի՞նչ է դասավանդման միջառարկայական մոտեցումը, և ինչպե՞ս է այն նպաստում գրական երկի ուսուցման արդյունավետության բարձրացմանը

Հետազոտող ուսուցիչ՝ Աստղիկ Մխիթարյան

(Երևանի «Արգենտինյան Հանրապետություն» հ. 76 հիմնական դպրոց)

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն---------- 3

Գլուխ 1

Միջառարկայական կապերը որպես մանկավարժական հիմնախնդիր-----4

Աշխարհը միջդիսցիպլինար է----------5

Նշանակալի ուսուցում----------8

Միջառարկայական ուսուցման բերած օգուտները երեխաների համար-----9

Միջառարկայական ուսուցման պլանավորում----------12

Գլուխ 2

Գրականություն-երաժշտություն-կերպարվեստ---------- 13

Օրինակելի դասի պլան----------19

Եզրակացություն----------23

Օգտագործված գրականության ցանկ----------25

Ներածություն

Հետազոտության արդիականությունը: 21-րդ դարում առանձնակի կարևորվում է գիտությունների համագործակցությունը: Եվ քանի որ ուսումնական առարկաները ուսուցանում են գիտությունների հիմունքները, ուստի հրատապ է դառնում նաև ուսուցման գործընթացում միջառարկայական, միջգիտական կապերի ապահովումը, ինչը կրթության առաջնային նպատակներից մեկն է:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ դասավանդման ժամանակակից մեթոդաբանության պահանջներով դիտարկվում է միջառարկայական մոտեցումը և գրական երկի ուսուցումը՝ այն դարձնելով հանրակրթության նոր չափորոշչին և առարկայական ծրագրերի պահանջներին համահունչ:

Հետազոտության հիմնախնդիրը: Այս հետազոտական աշխատանքի մեջ ուսուցիչները կգտնեն հիմնավորում և կոնկրետ օրինակներ այն մասին, թե ինչու են միջառարկայական և վերառարկայական կապերը կևոր ու ինչպես են նպաստում ուսուցման արդյունավետության բարձրացմանը, օգնում ուսուցչին և սովորողներին ընդլայնել իրենց գիտելիքները, խթանել քննադատական մտածողությունը, համադրել, հակադրել և դուրս բերել այն կարևորն ու օգտակարը, որոնք շարժիչ ուժ կդառնան աշակերտներին ուսման մեջ ներգրավելու, ուսուցումն արդյունավետ կազմակերպելու, կառավարելու և խնդիրներին ստեղծագործական լուծումներ տալու գործում: Մասնավորապես շեշտը դրվել է գրականություն-երաժշտություն-նկարչություն միջառարկայական կապի ապահովման և կիրառման արդյունավետության, դրա միջոցով գրական ստեղծագործության առավել խորքային ուսումնասիրության հնարավորության վրա՝ կոնկրետ զուգահեռներով մեկ անգամ ևս հաստատելով այն անհերքելի փաստը, որ գրականությունը խոսքի արվեստ է, որից մշտապես ծնվել ու ծնվում են այլ արվեստների գլուխգործոցներ:

Հետազոտության նպատակն է՝ ա. հետաքրքիր դիտարկումներով բացահայտել միջառարկայական մեթոդի էությունը, տվյալ եղանակով նյութի ուսուցման

սկզբունքները՝ մատնանշելով ու հիմնավորելով դասավանդման այդ տեսակի առանձնահատկություններով պայմանավորված առավելությունները, ուսուցման նպատակից բխող յուրահատկությունները:

բ. Համապատասխան օրինակներով վեր հանել գրականություն-երաժշտություն, գրականություն-նկարչություն միջառարկայական կապերը, դրանց կիրառման հնարավորություններն ու առանձնահատկությունները, որոնք ապահովում են ուսուցանվող նյութի բազմաշերտ ուսումնասիրություն և ընկալում:

գ.Արժևորել միջառարկայական և վերառարկայական կապերի ապահովման կարևոր դերն ու նշանակությունը աշակերտի՝ ուսման մեջ լիարժեքորեն ներգրավվելու, գիտելիքներն ընդլայնելու, քննադատական մտածողություն ձևավորելու և զարգացնելու կարողություններ և հմտություններ ձևավորելու գործում:

դ.Պարզել միջառարկայական ուսուցման առավելությունները և ցույց տալ, թե ինչ միջոցներով ու նպատակով կարելի է ստեղծել կապեր տարբեր առարկաների և գիտությունների միջև:

Հետազոտական հարցեր: Ինչու՞ դասավանդել միջառարկայական մոտեցմամբ:

Ինչպե՞ս ապահովել միջառարկայական և վերառարկայական կապեր ու նպաստել գրական երկի ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Գլուխ 1

Միջառարկայական կապերը որպես մանկավարժական հիմնախնդիր

Միջառարկայական կապերի մասին հայտնի մանկավարժ Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»:

Իսկ հայտնի հոգեբան Հովարդ Գարդները (1983) հաստատել է, որ սովորողները ուսուցման գործընթացում դրսևորում են ինտելեկտի բազմաթիվ ձևեր: Արդյունքում հաշվի առնելով, որ աշակերտները տարասեռ են իրենց ուսուցման ոճերում և ունեն տարբեր ծագում, հետաքրքրություններ, տաղանդներ և արժեքներ, տարբեր առարկաների և մեթոդաբանության լայն շրջանակի վրա հիմնվելը կբարձրացնի նրանց ներգրավվածությունը և կխթանի սովորելը:

Աշխարհը միջդիսցիպլինար է

Տարեցտարի միջառարկայական կապերն ու ուսումնասիրությունները ավելի տարածված և կարևոր են դառնում, իսկ գրականությունն ու արվեստը լավ հիմք են դրա ապահովման համար:

Սովորաբար աշակերտները հակված են մտածել նեղ կամ հատվածաբար: Գրականության և այլ առարկաների միջև կապերի հաստատումը կօգնի նրանց տեսնել և վերլուծել առավել ամբողջական պատկեր: Եթե մենք սովորեցնենք աշակերտին մտածել գլոբալ, այսինքն՝ խնդրին հնարավորինս տարբեր կողմերից մոտենալ, ապա խնդրի լուծումը կտրվի ստեղծագործաբար: Այստեղ, իհարկե, առաջ են գալիս բազմառարկայական, միջառարկայական և վերառարկայական հասկացությունները, որոնք, որքան էլ նման , այնուամենայնիվ ունեն իմաստային նրբերանգներ: Այս երեք

տերմինները վերաբերում են միևնույն շարունակականության վրա տարբեր աստիճաններով բազմաթիվ առարկաների ներգրավմանը և իրենց հատուկ իմաստներով դրանք չպետք է փոխադարձաբար օգտագործվեն:

Բազմառարկայականությունը հիմնված է տարբեր առարկաների գիտելիքների վրա, և մնում է դրանց սահմաններում: Այս պարագայում խմբային աշխատանքը տեղին է բարդ խնդիրների համար և միշտ չէ, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր նախագծում: Միջառարկայականությունը (միջդիսցիպլինար) վերլուծում, սինթեզում և ներդաշնակում է առարկաների միջև կապերը համակարգված և համահունչ ամբողջության մեջ: Վերառարկայական (տրանսդիսցիպլինար) կապերը ինտեգրում են բնական, սոցիալական և առողջապահական գիտությունները հումանիտար գիտությունների համատեքստում և գերազանցում են նրանց ավանդական սահմանները: Այս երեք մոտեցումների միասնական նպատակն է լուծել իրական աշխարհի բարդ խնդիրները, տրամադրել տարբեր տեսակետներ, ստեղծել համապարփակ հետազոտական հարցեր ու տալ լուծումներ:

Ըստ Անգլերենի ուսուցիչների ազգային խորհրդի (NCTE 1995)՝ «սովորողների համար կրթական գործընթացն ավելի վավերական է և արդյունավետ, երբ ուսումնական ծրագրերն արտացոլում են իրական կյանքը, որը բազմակողմանի է, այլ ոչ թե բաժանվում է կոկիկ առարկայական փաթեթների» (Edwards, 1996, Gaff & Ratclif, 1997 և Liein , 1996): Նրանց կարծիքով իրական աշխարհի խնդիրները բարդ են, ուստի ոչ մի գիտակարգ չի կարող լիարժեք նկարագրել և լուծել այդ խնդիրները: Հետևաբար նրանք չեն զարմանում, որ ուսուցման միջառարկայական ձևերը գերակշռում են և աճում են անշեղորեն ողջ կրթության ընթացքում: Այսպիսով՝ աշակերտները գիտակցում են, որ կան մի շարք հեռանկարային տարբերակներ, որոնք կարելի է կիրառել՝ հասկանալու խնդիրների էությունը և սեփական ինքնատիպ գաղափարներով հանդես գալ, ինչը լավ առիթ է ակադեմիական նվաճումների հասնելու համար: Այսպիսով՝ նրանք ավելի արդյունավետ են համարում հետազոտության միջառարկայական ձևերը, որոնք նպաստում են ներգրավվածությանը, սովորելուն և բացահայտելուն:

Մյուս կողմից՝ ուսուցիչները հնարավորություն ունեն որոշելու միջառարկայական մոտեցման մասնաբաժինը, ուստի նրանք իրենց դասընթացի մեջ ներդնում են միջառարկայականության այն մակարդակը, որն իդեալական է իրենց կարծիքով՝ հաշվի առնելով ուսուցման այս ձևի հետ կապված իրենց փորձը և վարած դասընթացի բնույթը:

Աշակերտներին ներգրավելը և նրանց օգնելը զարգացնել գիտելիքները, պատկերացումները, խնդիրներ լուծելու հմտությունները, բարձրացնել ինքնավստահությունը և սովորելու մղումը ընդհանուր նպատակներ են, որոնք ուսուցիչները դնում են իրենց առջև, և միջառարկայական ուսուցումն ու ուսումնասիրությունը նպաստում են այդ նպատակների իրականացմանը:

Միջառարկայական ուսուցումն իրականացնում է այս նպատակները երկու ճանապարհով: Նախ՝ օգնելով սովորողներին՝ բացահայտելու պատկերացումները մի շարք առարկաներից, որոնք նպաստում են քննարկվող հարցի ըմբռնմանը: Երկրորդ՝ օգնելով զարգացնել այս առարկաներից վերցրած հասկացություններն ու գաղափարները վերլուծության ավելի լայն հայեցակարգային շրջանակում ինտեգրելու կարողությունը:

Նոր առարկայական ծրագրերը ներառում են առարկայական սահմաններից դուրս՝ վերառարկայական ուսուցման «տարածք», որպեսզի երեխաները կարողանան կապ հաստատել ուսուցման տարբեր ոլորտների միջև: Միջառարկայական և վերառարկայական ուսումնասիրությունները կարող են բավարարել երեխաների կրթական բազմազան կարիքները: Երևույթը տարբեր տեսանկյուններից քննելը խորացնում է ըմբռնումը, և կարող է ուսումնական ծրագիրն ավելի հետաքրքիր և բովանդակալից դարձնել սովորողի համար: Միջառարկայական ուսումնասիրություններ կատարող ուսուցիչները կարող են օգտվել այն գործընկերների հետ աշխատելու հնարավորությունից, ովքեր պատրաստակամ են առաջարկել ուսուցման իրենց հարուստ փորձառությունը և աջակցել աշակերտների ավելի լայն ներգրավվածությանը ուսման մեջ:

Նշանակալի ուսուցում

Խոսելով ուսուցման միջառարկայական մոտեցման մասին՝ անհնար է չանդրադառնալ 20-րդ դարի ամերիկացի հայտնի մանկավարժ Դի Ֆինքի տաքսոնոմիային, որը նա ներկայացրեց 2003 թվականին: Դի Ֆինքը հիմնարար հարց է տրամադրում, որը բոլոր ուսուցիչները պետք է դնեն իրենց առջև. «Ինչպե՞ս կարող եմ ստեղծել դասընթաց, որն իմ աշակերտներին զգալի ուսումնական փորձ ապահովի»: Այս հարցին անդրադառնալու ընթացում նա հորդորում է ուսուցիչներին բովանդակակենտրոն մոտեցումից անցնել դեպի ուսումնակենտրոն մոտեցում, որը ենթադրում է հետևյալը՝ ուսուցման ո՞ր տեսակները **նշանակալի** կլինեն աշակերտների համար, և ինչպե՞ս կարող եմ ստեղծել դասընթաց, որը կհանգեցնի այդ տեսակի ուսուցմանը»::

Ուսուցումը նշանակալի է համարվում, երբ կիրառվում են իմաստալից և շարունակական դասարանային փորձառություններ: Ըստ Ֆինքի, երբ ուսուցիչները սովորողներին տալիս են մի շարք կարողություններ և հմտություններ, որոնք իրենք համարում են կարևոր, նրանք նպաստում են աշակերտի ներգրավվածությանը ուսման մեջ: Ֆինքն իր տաքսոնոմիայում առանձնացնում է կրթական գործընթացի 6 տարրեր, որոնք հանգեցնում են ***նշանակալի ուսուցման***, և դրանցից յուրաքանչյուրը ուսուցման միջառարկայական ձևերի ընդհանուր հատկանիշ է ներառում(Fink, 2003):

Ստորև՝ Ֆինքի տաքսոնոմիան



Taxonomy of Significant Learning

Bloom's Taxonomy



- **Հիմնարար գիտելիքներ** - Հիմնարար գիտելիքը ներառում է ամբողջ բովանդակությունը, գաղափարները և տեղեկությունները, որոնք դուք ցանկանում եք, որ ձեր աշակերտները իմանան կիսամյակի վերջում(ըստ ՀՊՉ-ի՝ լեզվական կարողունակություն և գրագիտություն):

- **Հմտությունների կիրառում** –Քննադատական, ստեղծագործական և գործնական մտածողություն, ինչպես նաև լրացուցիչ հմտություններ, որոնք կարող են օգտակար լինել ուսանողների համար(ըստ ՀՊՉ-ի՝ ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն):

- **Ինտեգրում** – Ինտեգրումը ենթադրում է մի շարք գաղափարները միմյանց հետ կապելու, համդրել-հակադրելու կարողություն, որոնք կարող են հանդիպել տարբեր առարկաներում կամ ողջ կյանքի ընթացքում(ըստ ՀՊՉ-ի՝ լեզվական կարողունակություն և գրագիտություն):

- **Անձնական գործոն –** Այս աստիճանը օգնում է գնահատել, թե արդյո՞ք ուսանողները ավելին են սովորում իրենց և ուրիշների մասին: Այն շեշտում է մարդկային գործոնը և մեծ նշանակություն է տալիս ուսման մեջ խնդիրների սոցիալական և անձնական հետևանքների գիտակցմանը: Իմացեք ձեր և ուրիշների մասին՝ արդյունավետ գործելու և փոխազդելու համար(ըստ ՀՊՉ-ի՝ ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն):

- **Հոգատարություն** - Հոգատարությունն այն աստիճանն է, որն ապահովում է սովորելու մոտիվացիա և էներգիա՝ զարգացնելով դասընթացի նյութի հետ կապված նոր հետաքրքրություններ, զգացմունքներ և արժեքներ: Սա զգացմունքների, հետաքրքրությունների և արժեքների դերի ճանաչումն է, ապրումակցումը(ըստ ՀՊՉ-ի՝ ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն):

- **Սովորել՝ ինչպես ովորել** - Սա հնարավորություն է տալիս երկարաժամկետ ուսուցման՝ սովորեցնելով աշակերտներին դառնալ ինքնուրույն սովորողներ: Այս աստիճանում հստակեցվում են ուսուցման գործընթացի վերաբերյալ

պատկերացումները և ձևավորում է սովորել սովորելու կարողունակությունը(ըստ ՀՊՉ-ի՝ սովորել սովորելու կարողունակություն)։

Լեզուների ուսուցման պատմությունը միշտ շեշտը դրել է գրականության ուսումնասիրության կարևորության վրա, քանի որ գրականությունը ուղի է, որով լեզուն կենդանանում է ու դառնում ժամանակի և պատմության վկա։

Տեքստի ըմբռնման միջառարկայական ուսումնասիրության հարացույցում արդիական է տեքստի իմաստի (ճանաչողական լեզվաբանություն) նախաըմբռնման նկարագրությունը։ Գրական տեքստը վերլուծելու համար կարևոր է իմանալ հեղինակի, նրա ստեղծագործության վերաբերյալ ամբողջական տեղեկություն, ծանոթանալ նրա հայացքներին, աշխարհայացքին։

Գիտելիքների տարբեր տեսակների հաջող կիրառումը հեշտացնում է տեքստի ըմբռնումն ու մեկնաբանումը լսողի կողմից։ Գրական տեքստերում նկարագրությունները բացահայտելու համար պետք է հիմնվել միջառարկայական մոտեցման դրույթների՝ փաստերի համալիր վերլուծության վրա։ Տեքստը հասկանալու համար կարելի է օգտագործել տեքստի ըմբռնման չորս փուլերում կիրառվող տեխնիկան, այն է՝

1. Տեքստի վերաբերյալ հարցերի ձևակերպում(տեքստի համեմատաբար ամբողջական միտք արտահայտող մասերի վերաբերյալ)՝ պայմանավորված ուսուցչի պահանջները կատարելու անհրաժեշտությամբ։

2.Աշակերտների կողմից տեքստը հասկանալու համար անհրաժեշտ առաջադրանքների լուծում

3. Տեքստը քննադատաբար ընկալելու փորձ.քննարկման ծավալում

4. Տեքստի նկատմամբ քննադատական վերաբերմունքի արտահայտում (Բարխաև, 2009)։

Միջառարկայական ուսուցման բերած օգուտները երեխաների համար։

• Աշակերտները մոտիվացված և ներգրավված են. նրանք ցուցաբերում են հետաքրքրություն որոշակի խնդրի ուսումնասիրության համար։

• Աշակերտների մոտ ձևավորվում է վստահություն ինչպես ինտելեկտուալ, այնպես էլ մարտահրավերներին դիմակայելու հարցում:

• Ուսուցումը անմիջականորեն կապված է իրական կյանքի փորձի հետ և խթանում է քննադատական մտածողությունը: Երեխաները ձեռք են բերում քննադատական գրագիտության հմտությունները համատեքստում կիրառելու կարողություն, որն էլ իր հերթին նպաստում է բարձր կարգի մտածողության զարգացմանը:

• Աշակերտները աշխատում են անհատական և համատեղ ու ձեռք են բերում համապատասխան գիտելիքներ ու անհրաժեշտ հմտություններ:

• Այն թույլ է տալիս առավել խորությամբ ուսումնասիրել թեմաներն ու խնդիրները

• Ներգրավում է սովորողներին խորը հետազոտության մեջ՝ հիմնվելով տեղեկատվության տարբեր աղբյուրների վրա:

• Հնարավորություն է տալիս առարկայական տարբեր ոլորտներում ըմբռնել տարբեր տեսակետներ, համեմատել և հակադրել տարբեր առարկաներից սովորածը և բացահայտել այն կարևորը, որն անհրաժեշտ է որոշակի խնդիր լուծելու համար:

• Միավորել տեղեկություն և գաղափարներ տարբեր առարկաներից, դիտարկել խնդրի լուծման այլընտրանքային ուղիներ, կանխատեսել արդյունքները և բացատրել այս ամենը:

Միջառարկայական ուսուցման պլանավորում

Միջառարկայական ուսուցման պլանավորումը պետք է լինի հստակ և ուշադրություն դարձնի ուսուցման համար անհրաժեշտ կապերին: Այն հաճախ պահանջում է համագործակցային պլանավորում, որը կարող է ներառել .

- դասեր, թեմաներ կամ բաժիններ
- երեխաների ներդրումն ու գաղափարները
- համագործակցություն տարբեր առարկաների գործընկերների հետ
- ուսումնական մտադրությունները, համապատասխան փորձը և հաջողությունները

Գլուխ 2

Գրականություն–երաժշտություն-կերպարվեստ

(Ուսուցման իմ փորձից)

Ժամանակակից մեթոդների շարքում հետաքրքիր և արդյունավետ են միջառարկայական կապերը, երբ զուգահեռներ են ստեղծվում հատկապես գրականության և այլ առարկաների միջև: Պայմանավորված ուսուցանվող նյութով և աշակերտների տարիքային խմբերով՝ միջառարկայական կապեր կարելի է ստեղծել տարբեր զուգահեռումներով: Ժամանակակից լեզուների ասոցիացիան 2007 թվականի «Օտար լեզուները և բարձրագույն կրթությունը» իր զեկուցման մեջ առաջարկել է «ավելի լայն ուսումնական ծրագիր, որտեղ լեզուն, մշակույթը և գրականությունը միջառարկայական դասընթացների միջոցով ուսուցանվում են որպես շարունակական ամբողջություն» (պարբերություն 8): Մենք՝ որպես լեզվի և գրականության ուսուցիչներ, կարող ենք դա ապահովել և ցույց տալ նրանց, թե ինչպես գրականությունը կարող է ներառվել բազմաթիվ առարկաների մեջ, և ինչու է դա անհրաժեշտ:

Առավել հետաքրքիր է գրականություն և արվեստ միջառարկայական կապը, որը հնարավորություն է տալիս առնչվելու արվեստի տարբեր ճյուղերի գործերին, ծանոթանալու հայ և համաշխարհային մշակույթի լավագույն ստեղծագործություններին:

Գրականություն-երաժշտություն- նկարչություն կապը կարելի է ստեղծել մի քանի տարբերակներով:

1-ին տարբերակ: Միջին դասարաններում գրականություն-երաժշտություն կապը կարելի է ստեղծել այնպիսի ստեղծագործությունների ուսուցման ժամանակ, որոնց հիման վրա գրվել են երաժշտական գործեր: Օրինակ՝ Մ. Մեծարենցի, Վ. Տերյանի, Ա. Իսահակյանի, Ս. Շահազիզի բանաստեղծություններն ուսումնասիրելիս կարելի է ընթերցմանն ու վերլուծությանը զուգահեռ լսել դրանց հիման վրա գրված երգերի լավագույն կատարումները: Վստահաբար մատուցման այդ ձևը կնպաստի բանաստեղծության ավելի խորը ընկալմանը: Մեղեդու կախարդական հմայքը

աշակերտի հոգում կարթնացնի հետաքրքիր զգացողությունների փունջ. բանաստեղծական պատկերի և ձայնային ելևէջների զուգահեռ ընկալումը կբացի հուզական այն աշխարհը, որ կերտել է բանաստեղծն իր խոսքում: Առավել հետաքրրիր կլինի, եթե ձայնային տվյալներ ունեցող աշակերտի կողմից լինի երգի կատարումը, որը դասարանում կստեղծի ջերմ ու հաճելի մթնոլորտ:

2-րդ տարբերակ: Գրականություն-երաժշտություն կապ կարելի է ստեղծել այն ստեղծագործությունների ուսուցման ժամանակ, որոնց հիման վրա կան գրված օպերաներ կամ բալետներ: Օրինակ՝ Թումանյանի «Անուշ» պոեմի ուսուցման ժամանակ կարելի է կազմակերպել Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի ունկնդրումը կամ այցելել օպերային թատրոն՝ ներկայացումը տեսնելու: Լավ կլինի դիտել նաև «Անուշ» ֆիլմ-օպերան, այնուհետև անցկացնել արվեստի երկու գործերի զուգահեռ քննարկում: Բացատրել, որ սովորաբար օպերաները գրվում են ոչ թե բնագիր ստեղծագործությունների հիման վրա, այլ հատուկ մշակված լիբրետտոյի, սակայն «Անուշը» բացառիկ դեպք է, որովհետև Ա. Տիգրանյանը երաժշտությունը գրել է հենց բնագրի հիման վրա՝ առանց որևէ բառ փոփոխելու:

Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի ուսուցման ժամանակ ևս կարելի է ունկնդրել Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերան կամ դիտել համանուն ֆիլմը, որոնք ստեղծված են Թումանյանի վերոնշյալ պոեմի մոտիվներով: Գեղարվեստական պատկերներին զուգահեռ երաժշտական դրամատիկ ելևէջներից ու կինոնկարի ազդեցիկ տեսարաններից առաջացած հուզական դաշտը է՛լ ավելի կնպաստի գրական երկի բազմակողմանի ընկալմանը, խորքային վերլուծությանը:

3-րդ տարբերակ: Գրականություն-երաժշտություն- նկարչություն կապի օգնությամբ հնարավոր է զարգացնել աշակերտների լսողությունը, երևակայությունը և պատկերային մտածողությունը: Կարել է աշակերտներին հանձնարարել լսել մեղեդին, հետո գրել, թե ինչ պատկերներ են տեսնում և ինչ սյուժե կարելի է հյուսել այդ մեղեդու ներքո: Այսինքն՝ դասական երաժշտության մեղմ ու հոգեպարար երաժշտության լեզվով կերտված ձայնապատկերները աշակերտները պետք է վերածեն բառապատկերների կամ նկարի՝ լի հույզերով, զանազան զգացմունքներով :

4-րդ տարբերակ: Գրականություն-նկարչություն-երաժշտություն միջառարկայական կապի ապահովման լայն հնարավորություն է ստեղծվում միջին դպրոցում «Արա գեղեցիկ և Շամիրամ» առասպելը(սկզբնաղբյուրը՝ Մ. Խորենացի) և ավագ դպրոցում Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունն անցնելիս: Երկու դեպքում էլ նպատակահարմար է ցուցադրել Վ. Սուրենյանցի «Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ» գեղանկարը և քննարկում կազմակերպել: Կարելի է աշակերտներին մղել սեփական կարծիքի և դիրքորոշման արտահայտման Շամիրամի կերպարի շուրջ՝ այսպիսով ապահովելով հանրակրթական հիմնական ծրագրերի ***դիրքորոշում*** կևևոր բաղադրիչը:

Վ. Սուրենյանց

Արա Գեղեցիկի և Շամիրամի մասին անցնելիս անհրաժեշտություն է առաջանում նաև ներառարկայական կապերի ստեղծման: Հարկ է անպայման նշել, որ Արա Գեղեցիկի և հատկապես Շամիրամի կերպարը մեծապես հետաքրքրել է արվեստի և գրականության մեծերին, ու շատերն են իրենց ստեղծագործություններում անդրադարձել նրանց: Հիշել Վ. Տերյանի հայտնի տրիոլետը(ութնյակ)՝ «Չեմ դավաճանի իմ Նվարդին»(1915), Ե. Չարենցի «Շամիրամ» (1916) և «Հին պատմության լեգենդը» (1936) բանաստեղծություններն ու «Շամիրամ» բալլադը(1920), Կ. Զարյանի «Արա աստված» պոեմը: Գր. Ղափանցյանը 1944թ. հրատարակել է «Արա Գեղեցիկի պաշտամունքը» գիրքը:

Արայի և Շամիրամի կերպարներին անդրադարձել են նաև օտարազգի հեղինակներ: Իտալացի հայտնի գրող Անտոնիո Ջուլիո Բարիլին գրել է «Սեմիրամիդա»(Շամիրամ) վեպը, որը 1876թ. թարգմանվել է հայերեն և լույս տեսել «Արա Գեղեցիկ» վերնագրով: Այս վեպի հիման վրա թարգմանիչ Ալեքսանդր Աբելյանը 1910թ. ստեղծել է «Արա Գեղեցիկ և Շամիրամ» թատերգությունը: Հայտնի է հունգարահայերի «Արմենիա» հանդեսում 1896-1897թթ. հայազգի Դավիթ Մարտոնի տպագրած «Արա Գեղեցիկ» ողբերգությունը: Մեկ այլ հայազգի գրող Կ.Կորոտկովն ունի «Սեմիրամիդա» («Շամիրամ», 1917թ.) անունով պոեմ: Արայի մասին տեղեկություններ կան նաև հունական աղբյուրներում և Սեբեոսի գրքում:

Նորից անդրադառնալով գրականություն և երաժշտություն կապին՝ ասենք, որ այստեղ էլ ունենք մի համաշխարհային երաժշտական գլուխգործոց, այն է՝ Իտալացի հանրահայտ կոմպոզիտոր Ջոակինո Ռոսսինիի Շամիրամ (իտալերեն՝ Semiramide) 2 գործողությամբ օպերան, որը համարվում է կոմպոզիտորի լավագույն ստեղծագործություններից մեկը: Իտալերեն լիբրետտոն գրել է Գաետանո Ռոսսինի՝ ըստ Վոլտերի «Շամիրամ» ողբերգության: Օպերան առաջին անգամ ներկայացվել է 1823 թ.փետրվարի 3-ին Վենետիկի «Լա Ֆենիչե» (La Fenice) թատրոնում: Շամիրամի գլխավոր դերերգը կատարել է Ռոսսինիի կինը՝ երգչուհի Իզաբելլա Կոլբրանը: 20-րդ դարում Շամիրամի դերերգի փայլուն կատարողը եղել է Ջոան Սազրլենդը: Շատ խրախուսելի կլինի, եթե ուսուցչուհին հետամուտ լինի և դասարանում լսեն Շամիրամի հանրահայտ արիան հիշյալ օպերայից և կազմակերպեն քննարկում: Այսպիսով կապահովվի ոչ միայն սոսկ գրականություն-երաժշտություն միջառարկայական կապը, այլև երեխաները կծանոթանան օպերային արվեստի փառահեղ նմուշներից մեկին, կփորձեն հասկանալ ու զգալ դասական արվեստի գեղեցկությունը, ինչու ոչ, նաև հպարտանալ, որ մեր քերթողահայր Մ. Խորենացին դարեր շարունակ արվեստի ինչպիսի գլուխգործոցների հիմք է տվել:

Նույն կերպ կարելի է նաև 12-րդ դասարանում Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպն անցնելիս ցուցադրել հայ պատմական գեղանկարչության լավագույն նմուշներից մեկը՝ Գր. Խանջյանի «Վարդանանք» գորգանկարը և առաջարկել աշակերտներին ընթերցել«Ավարայրի ճակատամարտից» հատված և ծավալել քննարկում.

1. Ի՞նչ գունային ներկապնակ է օգտագործել Խանջյանը պատերազմական տեսարանը նկարելիս։ Օգտագործված գույները վերածի՛ր բառերի և արտահայտությունների ։

2. Ո՞ր գույնն է գերիշխում Վարդան Մամիկոնյանի նկարում։

3. Նայելով «Վարդանանք» նկարին՝ առաձնացրո՛ւ դետալները և բնութագրի՛ր։

Տնային հանձնարարություն

Պատկերի՛ր Վարդան Մամիկոնյանին այնպիսին, ինչպիսին դու կցանկանաս տեսնել(ապահովում ենք հանրակրթական հիմնական ծրագրի **արժեքային** բաղադրիչը)։

Քննարկման արդյունքում կզարգանա երեխաների բառապաշարը նոր սովորած բառերով։

Գր. Խանջյանի «Վարդանանք» գորգանկարը

5-րդ տարբերակ։ Շարունակելով խոսել գրականություն-երաժշտություն-նկարչություն կապի մասին՝ անդրադառնանք մի նյութի, որն անցնում են 5-րդ դասարանում *Մայրենի* առարկայից։ Խոսքը Լեոնարդո դա Վինչիի «Կարապը» զրույցի(հեքիաթի) մասին է։ Գողտրիկ մի ստեղծագործություն, որը խորհելու և ապրումակցելու լայն հնարավորություն է տալիս։ Նախ այն, որ Լեոնարդո դա Վինչին աշխարհին առաջին հերթին հայտնի է որպես Վերածնության դարաշրջանի տաղանդավոր նկարիչ, բայց դպրոցականին ներկայանում է որպես գրող, արդեն իսկ հետաքրքիր է և տրամադրող։ Բացի դա, զրույցի բովանդակությունն այլաբանական է, ինչը ակամա մղում է խորը վերլուծությունների և մեկնաբանությունների։ Ուստի այստեղ մեծապես կարևորվում է ուսուցչի դերը և վարպետությունը, որ կարողանա նուրբ մեկնաբանություններով, միջառարկայական տեսանելի կապերով աշակերտին մղի քննադատական վերլուծությունների և այլաբանության բացահայտման։

Առաջարկում եմ դասարանը բաժանել խմբերի և որպես գործնական աշխատանք՝ մի խմբին հանձնարարել բերել տեղեկություններ Լեոնարդո դա Վինչիի կյանքի, ստեղծագործության և Վերածննդի դարաշրջանի, 2-րդ խմբին՝ կարապ թռչունի, նրա տեսակների մասին։ 3-րդ խումբը գրի կառնի տեղեկություններ ֆրանսիացի կոմպոզիտոր, երգեհոնահար Քամիլ Սեն-Սանսի, իսկ 4-րդ խումբը՝ բալետի համաշխարհային ճանաչում ունեցող պարուհիներ Աննա Պավլովայի և Մայա Պլիսեցկայայի մասին։ Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս ամենը չափազանցված է ու դժվար, բայց ոչ. եթե ուզում ենք դասը արտասովոր հետաքրքիր դարձնել ու աշակերտներին պրպտումների դրդելով տալ համապարփակ գիտելիք, ապա պետք է դուրս գանք առարկայի շրջանակներից, այլ կերպ ասած՝ հեռանանք, որ մոտենանք…

Դա Վինչիի «Կարապը» զրույցը (հեքիաթը)թեև շատ փոքր է իր ծավալով՝ ընդամենը մեկ էջ, սակայն խորհելու և վերլուծելու, զուգահեռներ տանելու ու այդ ամենի միջից ստեղծագործության գաղափարը դուրս բերելու լայն հնարավորություն է տալիս։ Մեռնող կարապի մասին պատմող այս չքնաղ ստեղծագործությունը լի է կյանքի հանդեպ սիրով, ու քանի որ հասել է « արժանավայել կերպով կյանքը վերջակետելու ժամանակը, իրիկվա խոր լռության մեջ սկսում է թևածել կարապի հոգեցունց երգը…»։

Այս փոքրիկ, բայց հանճարեղ ստեղծագործությունը կարծես ամբողջությամբ երաժշտություն լինի, որն ամեն ընթերցող լուռ լսում է յուրովի՝ ասես իր հոգու թախծանուշ երաժշտություն…Ու թեև ոչ մի հավաստի վկայություն չկա այն մասին, թե Լեոնարդո դա Վինչիի երկը հիմք է հանդիսացել որևէ երաժշտական ստեղծագործության, բայց և այնպես ակամա ծնվում են բազմաշերտ զուգորդումները՝ Ք.Սեն-Սանս-«Կենդանիների դիմակահանդես», Պ. Ի. Չայկովսկի-«Կարապի լիճ», Աննա Պավլովա, Մայա Պլիսեցկայա-թավջութակի կերկերուն հնչյունների տակ «Մեռնող կարապ»…

Որպես օգնություն ուսուցիչներին՝ ստորև տեղադրում եմ դասի օրինակելի պլանը։

Օրինակելի դասի պլան

Ուսուցչի անուն-ազգանուն - **Աստղիկ Մխիթարյան**

Առարկա՝ **Մայրենի**, դասարան՝ **5-րդ**, դասի տեսակը՝ **հաղորդման**

Թեմա՝ **Լեոնարդո դա Վինչի, «Կարապը»**

Նպատակներ՝ 1. Վեր հանել տեքստի ճանաչողական և այլաբանական նշանակությունը:

2.Միջառարկայական և վերառարկայական կապերի միջոցով ընկալելի դարձնել նյութը:

3. Զնավորել տեքստի ուսումնասիրության, լեզվառճական վերլուծություն կատարելու կարողություններ և հմտություններ:

4. Զարգացնել վարժ, գեղեցիկ և անսխալ ընթերցելու, կարդացածը սեփական և հեղինակային բառերով վերարտադրելու կարողություններ:

5.Ուշադրություն դարձնել խաչվող կամ ընդհանրական հասկացություններին:

6.Հարստացնել սովորողների բառապաշարը տեքստում տեղ գտած գրական գեղեցիկ բառերով: Ընդգծել տեքստի գեղագիտական կողմը:

7. Ստեղծել գրական-երաժշտական միջավայր, որը կստիպի աշակերտներին խորապես զգալ, սիրել ու արժևորել դասական արվեստը:

Մեթոդներ՝ դասախոսություն, բազմանիստ, աշխատանք դասագրքով, ցուցադրում, քառաբաժան, հարցադրում, երեքրոպեանոց շարադրանք

Ուսումնական նյութեր՝ դասագիրք, տետր, բառատետր, գրատախտակ, գունավոր կավիճներ, համակարգիչ, պատկերացույց, սահիկահանդես, տեսահոլովակ

Վերջնարդյունքներ-

իմանա՝ - ով է Լեոնարդո դա Վինչին

-կենդանական հեքիաթի հիմնական առանձնահատկությունները

Կարողանա՝ - վարժ ու անսխալ կարդալ բնագիրը

- սեփական և հեղինակային բառերով վերարտադրել հեքիաթը՝ վեր հանելով հիմնական գաղափարը

- բացատրել նոր սովորած բառերի նշանակությունը

- բացատրել հեքիաթի այլաբանությունը և տալ «կարապի երգ» դարձվածքի մեկնաբանությունը

- ապրումակցել

Դասի ընթացքը

1.Ողջույն, շարքերի ավագների զեկույցներ, տնային աշխատանքի ստուգում - **5 ր**

2.**Խթանում -8 ր**

ա. Սահիկահանդեսի օգնությամբ մատչելի ու հակիրճ բացատրել՝ ինչ է Վերածնունդը:

բ. Ներկայացնել Լեոնարդո դա Վինչիին որպես Վերածննդի դարաշրջանի իտալացի նշանավոր նկարիչ, գիտնական, քանդակագործ և գրող:

բ. Լրացնել բազմանիստ՝ «Կարապ» մեկնաբառով: Ստացված վերջնաբառը, կապելով սկզբնաբառին, մտքեր արտահայտել

3. **Իմաստի ընկալում - 21 ր**

ա.Արտահայտիչ ընթերցել տեքստը՝ Ֆրանսիացի երգահան, երգեհոնահար, դիրիժոր և դաշնակահար Քամիլ Սեն-Սանսի ոգեղեն երաժշտության ներքո:

բ.Բացատրել տեքստի ճանաչողական և այլաբանական նշանակությունը. 1)Կարապը մեռնելուց առաջ երգում է, թեև այդ երգը շատ քչերին է հաջողվել լսել:

2) Կարապի նուրբ ու գեղեցիկ կերպարի ներքո Դա Վինչին հավանաբար նկատի է ունեցել կնոջը, որն ամբողջ կյանում ձգտում է պահպանել իր գեղեցկությունն ու հմայքը, կամ առհասարակ մարդուն, որը ցավով է ընդունում իր՝ այլևս երիտասարդ չլինելու և կյանքի մայրամուտին հասած լինելու փաստը:

գ. Բառային աշխատանք և տեքստի լեզվառճական քննություն- 1)Հատուկ ուշադրություն դարձնել տեքստին հմայք տվող բառերին(դյուրաթեք, սարսուռ, արժանավայել, վերջակետել, գեղանի, սրտահույզ, թախծանուշ), 2) բացատրել դրանց նշանակությունն ու ոճական արժեքը, 3)Վերհիշել, թե ինչ է երկհնչյունը և «Կարապը» զրույցից առանձնացնել երկհնչյուն ունեցող բառերը, 4)ուշադրություն հրավիրել այն հանգամանքին, որ մենք կարդում ենք ստեղծագործության թարգմանված տարբերակը, որը զարմանալիորեն հուզիչ է, գունեղ և տպավորիչ:

դ. Շարունակելով սահիկահանդեսի ցուցադրությունը՝ հակիրճ ներկայացնել ֆրանսիացի կոմպոզիտոր Քամիլ Սեն-Սանսին: Ցուցադրել Մայա Պլիսեցկայայի «Մեռնող կարապ» պարը: Զուգահեռ անցկացնել տեքստի և սիմֆոնիկ ստեղծագործության կարապների միջև: Ի՞նչ ընդհանրություններ ունեն, արդյո՞ք Սեն-Սանսի երաժշտության տակ պարող արտիստուհին իր կերպարով հիշեցնում է

Լեոնարդո դա Վինչիի կարապին: Ո՞ր պահերն են հատկապես տպավորում... Չմոռանալ հիշել նաև Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճ» բալետը:

4.Կշռադատում -5 ր

Լրացնել «Քառաբաժանը»՝ պատասխանելով հարցերին՝ ի՞նչ էի տեսնում, ի՞նչ ձայներ էի լսում, ի՞նչ էի զգում, ի՞նչ կվերնագրեմ: Աշակերտները պետք է նաև բացատրեն իրենց գրածները:

5.Անդրադարձ - 3 ր

Անդրադարձը կատարել հարցերով՝ ի՞նչ արեցինք այս դասի ընթացքում, ինչո՞ւ արեցինք, ի՞նչ սովորեցինք (կամ երեքրոպեանոց շարադրանք):

6. Շերտավորված և անհատական տնային աշխատանք - 3 ր

ա.Դասն արտահայտիչ կարդալ և պատմել:

բ.Կատարել դասի նկարազարդում:

գ. Համացանցից գտնել՝1. «Սպիտակ ադաջիո» հատվածը Պ. Ի. Չայկովսկու «Կարապի լիճը» բալետից, 2. Աննա Պավլովայի «Մեռնող կարապ» պարը: Բերել դասարան և ցուցադրել ընկերներին:

դ. Պարզել, թե Սեն-Սանսի ո՛ր ստեղծագործությունից է «Կարապ» սիմֆոնիկ հատվածը:

ե. Բանավոր վերաշարադրել պատմվածքը՝ հավելելով նոր հերոս:

Եզրակացություն

Հետազոտությունը թույլ տվեց հանգել հետևյալ եզրակացություններին.
1.Միջառարկայական ուսուցումը նպաստում է հիմնարար գիտելիքների ձեռքբերմանն ու տարբեր առարկաների գաղափարների ինտեգրմանը, սովորեցնում է՝ ինչպես կիրառել ձեռքբերած գիտելիքը: Օգնում է աշակերտին հասկանալու շրջապատող աշխարհը, նրա հատկությունները, հիմնական երևույթները, այնտեղ ընթացող գործընթացները և այն օրինաչափությունները, որոնց դրանք ենթարկվում են: Այսպիսով աշակերտները համոզվում են, որ գիտության տարբեր ոլորտները ոչ միայն կտրուկ սահմանազատված չեն, այլև փոխադարձաբար կապված են միմյանց հետ:
2. Հետազոտական աշխատանքում մենք ցույց տվեցինք միջառարկայական տարբեր մոտեցումների կիրառման արդյունավետությունը, դրանց օգնությամբ գեղարվեստական ստեղծագործության առավել բովանդակալից և բազմամակարդակ ուսումնասիրության հնարավորությունը, ինչը օգնում է՝

- առաջ մղել քննադատական մտածողությունը, ճանաչողական կարողությունները և գնահատել առարկաների միջև եղած տարբերությունները, որոնք հանգեցնում են ուսումնասիրվող հարցի ավելի լայն ընկալմանը
- ներգրավվել ավելի բարդ խնդիրների լուծման մեջ և ինտեգրել հակասական պատկերացումներն ու գաղափարները
- ավելի լավ պատկերացնել հետաքրքրություն ներկայացնող խնդիրների բարդությունը և մղվել ստեղծարարության

3. Ուսուցման միջառարկայական մոտեցումը հնարավորություն է տալիս իրականացնել **նշանակալի ուսուցում**(Ֆինք), որը աշակերտին սովորեցնում է՝ ինչպես կիրառել գիտելիքը և հասկանալ, թե ինչպես սովորել(սովորել սովորելու կարողունակություն): Ավելին, աշակերտները գնահատում են այն առարկաները, որոնք կարևորում են հոգատարության և սոցիալական փոխազդեցության դերը խնդիրները լուծելիս(ապրումակցում):
4.Գրականություն-երաժշտություն-նկարչություն կապի կիրառումը նպաստում է ուսուցանվող նյութի առավել խորքային վերլուծությանը, աշակերտների կողմից

վերառարկայական կապեր ստեղծելու հմտությունների ձևավորմանը, գեղարվեստական ստեղծագործության լայնածավալ ըմբռնմանը, դասը առանձնահատուկ և առավել հետաքրքիր դարձնելուն։

Գրականությունը արվեստ է, որից ծնվում են արվեստի այլ ճյուղերի գլուգործոցներ։ Եվ երեխան հենց դպրոցական տարիքից պետք է հաղորդակից լինի դասականին, գնահատի գեղեցիկն ու դաստիարակվի այդ ոգով ։ Իսկ դրա պատասխանատուն նաև մենք ենք՝ ուսուցիչներս։

Օգտագործված գրականության ցանկ

1.https://eric.ed.gov/?id=EJ1253555 / 12.07.2023

2.https://files.eric.ed.gov/fulltext/EJ1114734.pdf / 12.07.2023

3.http://www.st-rochs- sec.glasgow.sch.uk/Websites/SchSecStRochs/ UserFiles/file/CfE/InterdisciplinaryLearning_tcm4-620626.pdf /13.08.2023

4. https://serc.carleton.edu/econ/interdisciplinary/why.html /14.08.2023

5.https://pubmed.ncbi.nlm.nih.gov/17330451/#:~:text=Results%3A%20Multidisciplinarity%20draws%20on%20knowledge,a%20coordinated%20and%20coherent%20whole /14.08.2023

6. https://journals.ysu.am/index.php/Educ-21st-Century/article/view/10200 /15.08.2023

7.https://youtu.be/hinKFRFu_CU /18.08.2023

8.https://youtu.be/iATCnwR7oDg /18.08.2023

9.https://youtu.be/3MfenVhURLk /18.08.2023

10.https://youtu.be/sJjQxmtwUBw /19.08.2023

11. https://youtu.be/AvZ-o0sgUHM /20.08.2023

12. https://youtu.be/G_LHgXxz9VE- /19.08.2023

13. https://youtu.be/tkFSBkl9mmo -/20.08.2023

14. https://youtu.be/klauccJwu80/22.08.2023

15. https://hy.wikipedia.org/wiki/ /20.08.2023

16. https://youtu.be/klauccJwu80/22.08.2023

17.Դ. Գասպարյան, Ժ. Քալանթարյան, Հայ գրականություն, 12-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2011